անուամբ կանչնի Ամատայ և Թուրքմէնների մէջ տեղից, Խրիցու գիւղի արևելքից, Միրանկներու և Բօշիկի արևմտքից, կը խառնուի Շեռեւանայ:

5. Ալխոի գետ (Աշտից ձոր) և Մէրկեզերի գետակ.—Գետի չափ ընդարձակութիւն ունեցող գետակս՝ երկու մեծ ճիւղերէ կը կազմուի. մին չամչայ մեծ լերան կողերից կը բղխի, կիջնայ ի հարաւ, Մերկեզերի[1] կամ Դիւ-աւանայ ջուր անուամբ, և քանի դաշտ չէ իջած մեծ ոլորումներ կը կազմէ. իսկ երկրորդ ճիւղն է Ալխոի կամ Ճէմի—չալթոյի ջուրն, որ Ալխոյի և Սինակ լեռներէ չորս ժամու չափ յարեւմուտս կը խոնարհի անցնելով Ալխոյ անուամբ չորս ամփոփեալ գիւղերու միջից մինչև Ճէմէ—Չալթոյ. ցայս վայր ընդունելով այլ և այլ օժանդակներ, կը դառնայ արևմտեան հարաւ, 2½-3 ժամ ընթանալէ յետոյ, Պառապի գիւղի ստորոտն կը միանայ Մերկեզեր գետակին. Պաշլի անուամբ դաշտի մէջ կերկարի ի հարաւ. Ներքին Պառապի Երանոս գիւղերու և Գոշաքիլիսէի արևմուտքից անցնելով՝ կը խառնուի Քօր գետ, կը թափի ի Մուրատ և ապա ի Շեռեւան: Պաշլին կը բաժանէ Գոշաքիլիսէի և Ալաշկերտի գայմագամութիւններն:

6. Մանկասարայ ջուր.—Այս ջուրը Սինէկայ շըղթային Կօլկենի սարի կողերից կիջնայ խիստ զառիվայր մի. երեք ժամ ընթացքէ մի յետոյ մեծ ժայռի մի զարնուելով երկու մասի կը բաժանուի մին հարաւ կը թափի, Աւէ մասի (ձկան ջուր) անուամբ, հանդէպ

---

1. Մարգագէա կամ Մերկեզար քրդերէն կը նշանակէ դեղին մարդ, կամ ոսկեմարդ, արդէն այս վայրի մարդերն ընդհանրապէս դեղնագոյն ծաղկօք կը զարդարուին.